**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ**

# ՀՐԱՄԱՆ

**ք. Երևան** «08» 02 2021թ № 106-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի N301-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով

**հրամայում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի մայիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմում ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումներին ընթացք տալու համար լիազոր անձ և պատասխանատու ստորաբաժանում սահմանելու, ինչպես նաև հաղորդումների հաշվառման, ձևակերպման և ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը հաստատելու մասին» N301-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի նախաբանում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 11-ի N1229-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 13-րդ կետի «դ» ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով,» բառերով.

2) Հրամանի ամբողջ տեքստում և հավելվածում «ՀՀ տնտեսական զարգացման և

ներդրումների» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի» բառերով.

3) Հրամանի ամբողջ տեքստից և հավելվածից հանել «աշխատակազմ» բառը՝ համապատասխան հոլովաձևերով.

4) Հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետում և 6-րդ կետում «աշխատակազմի ղեկավար Արմեն Կարապետյանին» բառերը փոխարինել «գլխավոր քարտուղար Արմեն Խաչատրյանին» բառերով.

5) Հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետում «աշխատակազմի իրավաբանական բաժինը» բառերը փոխարինել «իրավաբանական վարչությունը» բառերով.

6) Հրամանի 3-րդ կետի 1-ին ենթակետում «Նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ, պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Նելլի Մուրադյանին՝» բառերը փոխարինել «Նախարարության իրավաբանական վարչության պետ, պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Լուսինե Չիբուխչյանին՝» բառերով:

2/8/2021

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ